

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 08.07.2020թ. թիվ 2011307775 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<09>> 09 2020թ. 7-13 - 58000

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Սարգիս Կարապետյանի ՄԴ/112110-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Նոր Նորք 7-րդ զանգված 28 շենքի 9 բնակարանի բնակիչ Սարգիս Կարապետյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011307775 որոշումը՝ հայտնելով իր անհամաձայնությունը կայացված որոշման կապակցությամբ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011307775 որոշումը վերանայման ենթակա չէ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հաղվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 49-րդ կետի համաձայն Հետընթացն արգելվում է խաչմերուկներում, մերձակա տարածքից ճանապարհ դուրս գալիս և կանոնների 50-րդ կետում թվարկված տեղերում:

Նույն որոշման 41-րդ կետի համաձայն՝ շրջադարձը պետք է իրականացվի այնպես, որպեսզի երթևեկելի մասերի փոխհատումից դուրս գալիս տրանսպորտային միջոցը չհայտնվի երթևեկության հանդիպակաց կողմում:

Իսկ 52-րդ կետի համաձայն՝ երկկողմ երթևեկությամբ ճանապարհներին գծանշման բացակայության դեպքում հանդիպակաց երթևեկության կողմ է համարվում երթևեկելի մասի լայնության ձախ կեսը՝ չհաշված երթևեկելի մասի լայնացումները (թափառքի և արգելակման գոտիներ, ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի համար լայնացված տեղեր և այլն):

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ արգելվում է տրանսպորտային միջոցների վարորդների կողմից հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալը, եթե դա կապված չէ վազանցը թույլատրված տեղերում վազանց կատարելու կամ կանգնած տրանսպորտային միջոցը կամ խոչընդոտը շրջանցելու հետ և եթե առանց հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալու անհնար է շրջանցել կանգնած տրանսպորտային միջոցը կամ խոչընդոտը:

Վիճարկվող որոշման հիմքում դրված տեսանյութը փաստում է, որ 20.06.2020թ. ժամը 14:43-ին Երևան քաղաքի Դավիթ Բեկ-Շ.Ավետիսյան փողոցների խաչմերուկի հատվածում դիմումատուի կողմից վարած <<VAZ 217230>> մակնիշի 36OR865 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը դուրս է եկել հանդիպակած երթևեկության գոտի, որը կապված չէ վազանցը թույլատրված տեղում վազանց կատարելու հետ:

Տեսանյութը փաստում է նաև, որ վերջինիս կողմից իրավախախտումն չի կատարվել երթևեկության այլ մասնակիցների գործողության կամ անգործության հետևանքով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն, հետևաբար ակնհայտ է, որ անկախ անձի կողմից մեղքի ձևի դրսևորումից (իրավախախտում թույլ տվող անձը) նշված օրենսգրքի համապատասխան հոդվածի դիսպոզիցիայով նկարագրված արարք կատարած անձը պետք է ենթարկվի վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում:

Այսպիսով հիմնավորվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 08.07.2020թ. թիվ 2011307775 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել << վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Սարգիս Կարապետյանին:



Ե. Կարապետյան